ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2021թ. N---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՂ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.3 ՇԵՆՔԻ Հ.8 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8՝57.84քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17112015-01-0103 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սոֆյա Ազոյյանին, Նաիրա Մուսինյանին և անչափահաս Գագիկ Մուսինյանին, ում անունից հանդես է գալիս մայրը՝ Սոֆյա Ազոյյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՂ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 3 ՇԵՆՔԻ Հ.8 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջան՝ Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8՝ 57.84քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել /նվիրել/ Սոֆյա Ազոլյանին, Նաիրա և Գագիկ Մուսինյաններին:

Եղ.Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8՝ 57.84քմ բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17112015-01-0103 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Սոֆյա Ազոլյանը և Գագիկ Մուսինյանը համատեղ բնակվում են Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 հասցեում գտնվող բնակարանում, իսկ Նաիրա Մուսինյանը հաշվառված է նշված հասցեում, սակայն ժամանակավորապես բացակայում է ՀՀ-ից /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Շենգավիթ» համատիրության կառավարչի կողմից 26.02.2021թ. տեղեկանքը և համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 18.02.2021թ. տեղեկանքների՝ Սոֆյա Ազոլյանը 2014 թվականից, Նաիրա Մուսինյանը 1997թ., Գագիկ Մուսինյանը 2014 թվականից հաշվառված են վերը նշված հասցեում: Քննարկվող բնակարանը փաստացի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել այն օրինականացնել: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ բնակարանը 1959 թվականին հատկացվել է Սիմոն Մուսինյանին, Ռիմա Դանիելյանին, Էդուարդ Մուսինյանին, Ռուզաննա Մուսինյանին և Գարեգին /Գագիկ/ Մուսինյանին: Սիմոն Մուսինյանը, Ռիմա Դանիելյանը և Գագիկ Մուսինյանը /Նաիրա Մուսինյանի հայրը/ մահացել են, իսկ Ռուզաննա Սիմոնի Մուսինյանը և Էդուարդ Սիմոնի Մուսինյանը դեռևս 2014 թվականին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարական գրասենյակում տվել են հայտարարություն բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 02.06.2020թ հ. ԱՏ-02062020-99-0184, 26.02.2019թ հ. ԱՏ-22/02/2019-4-0132 տեղեկանքների համաձայն՝ Նաիրա Մուսինյանի և Գագիկ Մուսինյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, իսկ 02/06/2020թ. հ. ԱՏ-02062020-99-0248 տեղեկանքի համաձայն՝ Սոֆյա Ազոլյանի անվամբ ՀՀ ք.Երևան Նոր-Նորքի Քոչարյան փողոցի հ.32 շենքի հ.30 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք 1/11 բաժնեմասով, սակայն վերջին հինգ տարիների ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի օտարում և գրանցում չի կատարվել:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 315-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ ընտանիքի անդամների սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՂ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.3 ՇԵՆՔԻ Հ.8 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՂ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.3 ՇԵՆՔԻ Հ.8 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Եղ. Թադևոսյան փողոցի հ.3 շենքի հ.8 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ